



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՕՐՄԱՆՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ» ԵՎ ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱԶՈՆՅԱՆԸ

մենայն Հայոց Հայրապետության պաշտոնարերը «էջմիածին» ամսագրի նախորդ համարում հրապարակվեց կարդինալ Աղաչանյանի բանադրական, սպառնալից հայտարարությունը՝ ուղղված հայկարողիկ հասարակության՝ հանգուցյալ Օրմանյան արքեպիսկոպոսի մեծարժեք «Հայոց նկեղեցին» պատմական երկասիրությունը «արգիլված մատյաններու կարգին» դասված լինելու մասին; Որը վերջերս նորից վերակարարակվել է Բեյրութում՝ բահարանուուն հայ հավատացյալ բնբերցողների հարանուն պահանջները:

Նորից բեմի վրա է տիրամուշակ Աղաչանյանը՝ ազգադակ և հայրենուաց գործերի տիսուր ասպետը, այս անգամ՝ միջնադարյան մեծ հավատափենիչի՝ դոմինիկյան Տորկումատայի գրակու, սարսափով ու բանադրանով՝ արգելելու կարողիկ հայրենասեր հասարակությանը՝ կարդալու իր երեմենի Մայր եկեղեցու պատմությունը: «Գիտակցարար հակառակ գործողները (երևում է շատ է նրանց բիվը—ԽՄԲ.) ծանրութե կմեղանչեն... և նովին գործով կենքարկվին բանադրանքի...»:

Սփյուռքի հայ առաջադիմական մամուլը, մտավորականությանը, մեր հայրենասեր և հավատացյալ ժողովուրդը, այս անգամ ևս մերկացրել են և շարունակում են մերկացնել Աղաչանյանի միջնադարյան հավատափենչա-

կան մերուները, երա կյանքի գործունեության ողջ նպատակը՝ որը շատ նեռու է ազնիվ և նոգեշան լինելուց. մի գործունեություն, որն իր բոլոր կողմերով ուղղված է մեր պահածի Հայրենիքի և Հայաստանյաց Առաքելական Սույր նկեղեցու դարավոր կենտրոն Սույր էջմիածնի դեմ, հայ ժողովրդի միանական արմատական շահերի դեմ, մեր ժողովրդի գանձական հատվածների ազգային նկեղեցական բաղձալի միասնության դեմ:

Վատիկանը միշտ էլ հալածել ու հետապնդել է առաջապոր մտի ներկայացուցիչներին, խաղաղության աննկուն մարտիկներին, առաջադեմ գործիչներին. մեկ անգամ չէ, որ բոցակառվել են հավատափենության խարույկները՝ «ի փառ կարողիկ հավատիքի»:

Փաստերը վկայում են այն մասին, որ մեր օրերում ևս Վատիկանը հավատափենական նոր ապյանեներ է պատրաստում՝ նպատակ ունենալով նակատային հարձակման անցնել բնդում կարողիկ հասարակության առաջադեմ, խաղաղասեր և հայրենասեր խավերի և ոչ կարողիկ բոլոր այն եկեղեցիների, այդ բվում և՝ Հայաստանյաց Առաքելական նկեղեցու և՝ հայ հավատացյալ ժողովրդի դեմ, որոնք չեն ցանկանում իր փառախը մտնել:

Վատիկանը միշտ էլ իր կրնական նվանողական նպատակների համար օգտագործել է բարոյապես անկայուն և ապազգահացած մարդկանց, իրենց ժողովրդի ազ-

գային շամերի դավաճաններին, «մարդք ապականսալիք մտօօ՛ անպիտանք ի հաւատու» (թ ծրմոր., Գ 8), ինչպարսին է մեր օրերի Աղջանյանը, որը ոչ սր առքք բաց շիք քողաս։ իր առևլությունն արասանյամելու դեպք մեր նվիրական Հայրենիքը, դեպք Հայաստանյաց Սուաւելական Սուրբ Սկզբեցին։

Բայց սեպը մյաւսի ետեղությամբ առաջարկում են Աղջանյասը իսպանական դրյակները։

Մեր օրերի նոր Զանգակ Երեցը, իր ողջ առելությամբ, կրոսությամբ, դօմ արտահայտվեց նայ ծողովրդը պատասխան մեծ Հայրենադարձին՝ սպառնաց, բաւարեց, բայց կարավանները սեկնեցին։

Խչ եվազ ախուր ճակատագիր է վիճակված Աղջանյանի՝ Սփյուտքի Հայաստանյաց Առաւելական Սուրբ Եկեղեցին էջմիածնըց բռնի անշատելու սատանայական ծրագրին։ Սփյուտքում նայ ճակատացյալ ժողովուրդը, սեր նոգեարականուրյունը, առաջադիմական ու հայրենասեր մամուլը, վնական հակամարված տվեցին Աղջանյանների և նմանների այդ նեճք բաղաքանայանուրյանը։ Արտասահմանում մեր ճակատացյալ ժողովուրդը, սեր նոգեարականուրյունը, առաջադիմական ու հայրենասեր մամուլը, վնական հակամարված տվեցին Աղջանյանների և նմանների այդ նեճք բաղաքանայանուրյանը։ Արտասահմանում մեր ճակատացյալ ժողովուրդը ուժեղացնում է պայքարը բռնուրյաշի տարրերի դեմ՝ ճանուն Սուրբ էջմիածնի և ճանուն Հայրենիքի։ Հայ ժողովուրդը, ինչպես անցյալում, նոյնպես և այժմ, հպարտ է իր Ազգային Եկեղեցին, երա պատուրյամբ։ Հակառակ Աղջանյանների դավադրությունների, մեր ժողովուրդը Սփյուտքում և Մայր Հայրենիքում ավելի՝ սերտուն, ավելի՝ կազմակերպված, ավելի՝ զիտակցուն է համախմբվում իր սիրելի և պաշտելի Հայաստանյաց Առաւելական Սուրբ Եկեղեցու և իր ներսուական Սովետական Հայաստանի շուրջը։

Օրմանյանը, իրեւ երբեմնի կարողիկ վարդապետ, շատ սիրված ու ճարգաված է եղել նայ կարողիկ հասարակության մեջ՝ իր անկաշառ ազգայինուրյան և Եկեղեցայինուրյան համար։ Հայ կարողիկ հասարակությունը մինչև նիմա էլ սրբությամբ է պահում Օրմանյանի ազգային-Եկեղեցական ավանդները։ Եվ դա պատասխականուրյուն չէ երբեք։ Օրմանյանը գործուն դեր է կատարել 1870-ական թվականներին՝ նայ կարողիկ հասարակության ազգային կյանքը ալեկոնող հականաւենյան ծանոթ շարժումների մեջ։ Տիրանուշակ Հասունը, ճանուն ախուր փառախրափյունների և անձնական շամերի, Աղջանյանի նման, Վատիկանին էր իմանառում նայ հայրենասեր կարողիկ հասարակության ազգային անկախուրյան մենայրդները։ Օրմանյանը համոզված ճանդես է գալիս Հասունի դեմ, զիտակցում ազգային այն շարժումը, որի նետուրդները մեծացել ու դաստիարակվել էին հայրենա-

սիրական վառ շնչով ու ավանդուրյուններով, և որն ուզում էր ամեն զնով սրբությամբ պահել ու պամանել նայ կարողիկ հասարակության ներքին անկախուրյունը, ազգային շամենցը՝ կու շգեալու Վատիկանի ամենակառ, գորշ Երախին։ Օրմանյանը դեմ է դրս գալիս պայի ԾեղերՍՈՒԻՍ կոնդակին, և նետեղականուն պայքարում է Վատիկանի կարողիկ կանոնականուրյունների դեմ, ճանուն կարողիկ հասարակության ազգային շամերի, ազգային վենիրակության, մինչև այն պահը, երբ 40 ուրիշ նայ կարողիկ հայրենասերների հետ վերադառնում է Մայր Եկեղեցու ծոցը, ճարագատ ժողովրդի գիրկը։

Մեր օրերում, Աղջանյանն ևս, Հասունի նման, ասպարեզ է իշել պառակտելու նորից նայ ժողովրդի նոգեուր, ազգային միասնուրյունը, իրար դեմ լարելով նոյն ժողովրդի զավակներին, եղայրը նորու դեմ։

Աղջանյանը ևս այսօր, «ճականն հանգանե», նայ ժողովրդի կողմից, և՝ Սփյուտքում և՝ Մայր Հայրենիքում, դասկում է իրավամբ նայ ժողովրդի պառակտիչների առաջին շարժերում։

Դարեւ շարունակ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին, երա մեծանուն գործիները, հալածիկ են «սուտ եղաց» (թ Կորեր., Ժ 26) կողմից, որոնք պառակտել են մեր ժողովրդին։ Բայց Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայրապետները, այդ բռնում ճակ Ամենայն Հայոց արդի մեծանուն և հայրենասեր Հայրապետը՝ Գեորգ Զ. թ, միշտ սիրով ու նոյն հասարակաց նոր անշառ աշխով են նայել նայ ժողովրդի ազգային միուրյունից և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու ընդհանրությունից անշատված իրենց նայ կարողիկ և նայ բռնբարակ զավակների վրա։ Այսօր, ավելի քան մի այլ ժամանակ, մեր ժողովուրդը կարիք ունի ազգային-եկեղեցական միասնուրյունը, համերաշխուրյան, փոխըմբռնման։

Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու դարավոր ձգտումն է եղել՝ իրականացնել նայ ժողովրդի ցանկալի ազգային-եկեղեցական միասնուրյունը, «զոր օրինակ ժողովը հաւ զծազ իր ընդ քեռվե» (Մատր., Խ 37):

Իր պատուրյան ողջ ընթացքում, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին, նետեղականուն պահանելով ինանդերձ իր ներքին ինքնուրույնուրյան սրբազն իրավունքը և ազգային վենիրակությունը, քիստունեական անենիշաշրությամբ, ճանուն քրիստոնեական միասնուրյան մարդկան միջև եղայրայական ձեռք է մեծացել ու դաստիարակվել էին հայրենա-

Առաքելական Սուրբ Եկեղեցին միշտ ձըգտել է խաղաղության, Եկեղեցիների միջև համերաշխության ամրապնդան և, ինչպես անցյալում, այնպես և այժմ, իր համաստ լուսան է մոցըն Եկեղեցիների միջև խաղաղության պաշտպանության գործին՝ ըստ տերության պատվերին՝ «Երանի խաղաղարաց»:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին միշտ բարձր է գնահատել նաև ուրիշ Եկեղեցիների ներքին անկախությունը, վեճրավությունը:

Այսօր և մեր Եկեղեցին, մեր բարեպաշտ ժողովուրդը հավատում է իր դարավոր իդեալների հաղթանակին և նա պատրաստ է իր բարեկամական ձեռք մեկնելու բայր կրօններին, բոլոր Եկեղեցիներին հանուն համագործակցության, այս մոռայլ ու տագնապալից օրերին, երբ նորից սուր են բարձրացնում աշխարհի մի մասում խաղաղության, ժողովուրդների համերաշխության դեմ:

Մեր ժողովուրդը, մեր Եկեղեցին, ձգում է խաղաղության ոչ թե այն պատճառով, որ նա վախենում է Կարողիկ Եկեղեցու «հզորություն»ից, այլ իրեն նշմարտապես քրիստոնեական Հնդիանական Եկեղեցու համար ավելի պատվաքեր, այժմեական, հրատապ հարցեր կան, քան բյուզանդական երբեմնի ամուլ վեներն են: Մանավանդ որ հանրանայում փաստ է, որ Կարողիկ Եկեղեցին նայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ իր մղած դարավոր ու հակարիստանեական պայքարում, միշտ տաճուկ է տվել:

Եթե այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ձգում է խաղաղության, դրա պատճառն այն է, որ մեր ժողովուրդի խաղաղասիրական իդեալը անխօսիլուրեն կապված են Քրիստոսի պատվերներին և ամրուշ աշխարհում մարդկության շախչախիչ մեծամասնության բաղանձների հետ: Աղջանյանը մի անգամ բնդմիշտ պետք է իմանա, որ յուրաքանչյուր նայ մարդ, առանց զավանական խորության, ամենից առաջ իր Հայրենիքի՝ Սովորական Հայաստանի հայրենասերն է, խաղաղության շատագովը և մարտիկը:

Այս անգամ էլ անարգանի սյունին է գամվել «ծիրանակուր», բայց նա չի ցանկանում լսել բանականության, ողջմատության ձայնը և շարունակում է որոն ցանել նայ ժողովրդի մեջ: Լուսամոփի Արտավազը հայրենասեր սրբազնի հոգին, որ զոհն է եղել Աղջանյանի մատնության, բողոքում է Աստծու արդար դարավությունից:

Մոլեռանդ Աղջանյանը, նայ կարողիկ հայրենասեր համայնքի նույնիսկ պարզ նե-

տաքրերությամբ գեաի Սովորական Հայաստանն ու Սուրբ Եշորածինը, գիտում է որպես հանցագործություն:

Բայց Աղջանյանը բոլոր խաշակրաց արշավանքները դատապարտված են տապալման: Ամեն օր ավելի ուժեղանում են նույնիկ նայ կարողիկ ժողովրդի ատելությունն ու դգոննությունը հավատի և մտքի դաշին Աղջանյանների դեմ: Հայրենասեր նայ կարողիկ հասարակությունը ձգում է ազգային-Եկեղեցական միասնության:

Ի՞նչ շարժադիր ունեց Օրմանյանը լինու Կարողիկ Եկեղեցին ու վերադառնալու Մայր Եկեղեցու գիրկը: Մտածել է այս մասին Աղջանյանը: Օրմանյանը բոլոր ավալներն ունեց Կարողիկ Եկեղեցու ամենաբարձր ու ամենապատկալոր դիրքերի հասնելու համար. կարողիկ ասավածարանության, իմաստագիրության, Եկեղեցական իրավաբանության եռակի մագիստրոս, առո ըսթիք կոչված երապարակային մեծանալիք բընություններին պապի բացառակային պատճենական պատճենական արժեքությամբ առաջ կարող էր կրել «հնումեական կարդինալակության փառք» իր ուսերին, ինչպես այսօր այն կրամ է Աղջանյանը՝ դավանանության և այլ անուղիղ միջոցներով: Բայց Օրմանյանը շծախեց Աղջանյանի նման իր խիզնը, նա անսաց նշմարտության ձայնին, իր մարտիրոս, բայց ներու ժողովրդի դարավոր ձայնին, ու վերադարձ Մայր Եկեղեցու գիրկը, Կարծապետյան պատրիարքի պատկերավոր բացառությամբ ասած՝ օտարի փառավոր պալատից նախամեծարեց իր հայրենի համեստ, բայց հարազատ խիճիքը: Օրմանյանը նանաչեց, որ նշմարտությունը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմն է, և ինքը նախ նայ է՝ պատ Եկեղեցական: Աղջանյանի համար է ասված առաքելական խոսքը՝ «Յամենայն ժամ ուսանին, և երբեք ի գիտութիւն նշմարտութեան ոչ հասանեն» (Թ Տիմոր., Գ 7):

Մեծ ու պատկանելի է Օրմանյանի սուրբգրական, պատմա-բանասիրական, աստվածաբանական վաստակը: Նրա գրականության ժառանգությն է նայ հավատացյալ ժողովուրդը: Օրմանյանի բողած հարուստ, արծեքավոր գրական ժառանգության մեջ բացառիկ տեղ է գրավում երա օտարեների համար գրած «Հայոց Եկեղեցին» պատմական կոտ աշխատությունը, որտեղ աստվածաբանի խորը հմտությամբ, Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու հարազատ զավակի սիրով ու պաշտամունքով գրվել է մեր Եկեղեցու պատմությունը, վարդապետությունը. Վարդեթար չունչը կա ամեն մի տողի մեջ, ամեն մի եղրակացության մեջ: «Օտարեները

շատ անքավական տեղեկություններ են ունեցած մեր Եկեղեցու մասին, — գրում է նա, — իսկ ազգային օտարադավաններ — լմացիր հայ կարողիկ նոգևորականությունը՝ ավելի իրենց ընթացքը արդարացնելու շահացած են... մինչև իսկ պատմական եղելությունները այլագունելով» (էջ 4): Օրմանյանի «Հայոց Եկեղեցին աշխատությունը մեծ և արժանավայել բնդունելություն է գտնել օտար ընթեցողների շրջանակներում. «Հայ Եկեղեցու պատմության սկզբունքների նիշու ու համարյա կատարական ամփափումն է առիխա» նա և թե «Հայոց Եկեղեցու պատմության ուսումնասիրությունը երանանգի է և օգտակար, իր շատ կողմերով, Կարողիկ Եկեղեցու համար: Անա մի Եկեղեցի, որը շատ նին է և շատ սկզբնասիխ, որը պահվել ու զարգացել է մյուս Եկեղեցիների ազդցությաց շրջանակից դուրս, երանց գերիշխանությունը երբեք չի նաևաչել և հավատարմությամբ պահպանել է արևելյան նախնական Քրիստոնեության ժառանգությունը»:

Օրմանյանի «Հայոց Եկեղեցին», իր շատ արժանիքների մեջ, մի մեղադրական փաստարություն է Կարողիկ Եկեղեցու դեմ: Այս գրքում մերկացվում են Կարողիկ Եկեղեցում այրող բանահրական մերողները: «Հովմենադավան անձ մը, — գրում է սրբազն նեղինակը, — ամեն կողմեն պարփակված է, չի կրեար այսօր բաց կողմ մը գտնել, ուսկից կարենա իր անձնական կարծիքներուն անց տալ և ոչ ալ ասպարեզ մը՝ որուն մեջ կարենա ուսումնասիրությունը կատարել. բայց ի՞նչ կըսեմ, ոչ թե ուսումնասիրությունը, այլ նոյնիսկ մտածումն անգամ նոռմենադավանին արգիլված է. նա պետք է պատճառաբանել երաժարիք: Մեկնությունն արդեն ավելորդ է: Անա այսիսի խիստ, երկարէ, անքափանց շրջանակների մեջ է առնըլի հայ հայրենասեր կարողիկ հասարակությունը, Աղաքանյանների պատմառու: «Ինչենք ոչ մտածեն, և այլոց շտան բոյլ մտանենք»: «Ծիրանավորը» հասկանում է, որ կարողիկ հավատացյալը Օրմանյանի նշված աշխատությունը կարդարուց նետո, պիտի բացահայտվեն նրա առջև վերշին տարիների թղթերում զարգացրած պատմական նենգափնյումները և կեղծիքները, ուստի և այդ

նաևապարհով նա ցանկանում է ծածկել ամեն ինչ:

Հանգուցյալ Գարեգին Վեհր, իր ժամանակին, շատ բարձր գնահատական է տվել Օրմանյանի այս գործին: «Հայոց Եկեղեցին»ի հրատարակությունը Օրմանյանի կողմից, — գրել է նա, — մի հայրենասիրական գործ էր. մայրենի հինավորուց Եկեղեցու նիշտ պատկերը դնել Եկեղեցու պիտույքան առաջ առաջ, որպեսզի երանք իրական աղյուսից օգտվել կարգանան և ոչ թե մոլեռանդուրյամբ լցված նակառակուրդների պլոտոր ցելից, որ ժամանակի ընթացքում արտադրել են կարողիկ Եկեղեցականության Արելիքու գործող ներկայացուցիչները, կամ Հայոց Եկեղեցու բաժանվածները: Հայոց Եկեղեցին նակառակուրդներուց Եկեղեցու պատմության մեջ մի ուրուց տեղ է բնեում յուր ազգային բնավորությամբ, մարտիրոսական ընթացքով և հինավորուց պահանդարյուններով: Օրմանյան սրբազնը ամփոփում է այդ իր աշխատության մեջ՝ «Ենուրին կատարելապես իշխող վարդետին հատուկ սեղմ ու պարզ ոնով»:

Սրբարե, իր տեսակի մեջ գնահատության արժանի մեծ և ուշագրավ աշխատություն է այդ գիրքը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին: Պետք է կարդալ ու տարածել այն հավատացյալ ժողովրդի մեջ, զինվել երա սկզբունքներով Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու բանամինների դեմ: Սփյուռքի մեր Հայրենասեր ու հավատացյալ ժողովրդի ցանկությունն է՝ «հաստատուն պահել իր ազգային ինքնությունը, լեզուն, գրականությունը, իր հայելիքներից նվիրական ժառանգություն մեացած Աղքային Եկեղեցին, որն անձնեմինի պիտի պահել իր կանոններով և ավանդություններով» (Օրմանյան):

Հայ հավատացյալ ժողովուրդը սրբությամբ կպահի իր մեծագույն հոգևոր ժառանգությունը՝ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին, և կազորի փոլքեանըն, որ մի օր նրա հինավորուց կամարեների տակ, ուր աղորել, սիրել, կովել ու բաղվել են մեր սրբազն նախնիքը, նորից ողջունի հայ կարողիկ հայրենասեր հասարակության վերադարձը՝ լինելով «Մի 208 Եկեղեցին»:

